ԿԱՐԵՎՈՐ ԴԵՊՔԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1284—1291 թթ.—*Կարա-կոյունլու ցեղը գաղթում է Հայաստան։*

1313—1386 թթ.—*Ապրել ու գործել է Հովհան Որոտնեցին, Տաթևի համալսարանի հիմնադիրը։*

1338 թ.—*Չոբանյան դինաստիան իր տիրապետությունն է հաստատում Իրանի, Ատրպատականի և Հայաստանի վրա։*

1344—1358 թթ.—*Իշխում է Մելիք Աշրաֆը։*

1346—1409 թթ.—*Ապրել ու գործել է Գրիգոր Տաթևացին։*

1350—1425 թթ.—*Ապրել ու գործել է Գրիգոր Խլաթեցին (Մերենց)։*

1357 թ.—*Ոսկե Հորդայի խան Ջանիբեկը ա.իշավում է Ատրպատական։*
—Սպանվում է Մելիք Աշրաֆը և վերջ է դրվում Չոբանյանների իշխանությանը։

1358—1374 թթ.—*Իշխում է սուլթան Ուվեյսը, որը հիմնադրում է Ջելաիրյանների դինաստիան։*

1367 թ.—*Լվովը դառնում է ամբողջ հարավ-արևելյան Եվրոպայի հայերի եկեղեցական կենտրոն։*

1373—1410/12 թթ.—*Գործել է Տաթևի համալսարանը։*

1374—1382 թթ.—*Իշխում է սուլթան Ուվեյսի որդի սուլթան Հուսեյնը։*

1377—1378 թթ.—*Սուլթան Հուսեյնը պատժիչ արշավանք է կազմակերպում Կարա-կոյունլուների դեմ։*

1380—1450 թթ.—*Ապրել ու գործել է Առաքել Բաղիշեցին։*

1385 թ.—*Լանկ-Թամուրը ներխուժում է Ատրպատական և գրավում Սուլթանիե քաղաքը։*

1386 թ. գարուն—*Լանկ-Թամուրի զորքը գրավում է Թավրիզը, ապա մտնում Սյունիք, գրավում Նախիջևանը, պաշարում Երնջակի բերդը, ասպատակում Մեծ ու Փոքր Սյունիքները և Այրարատը։*

1387 թ. սեպտեմբեր—*Լանկ-Թամուրի զորքը պաշարում է և գրավում Վանի բերդը։*

1387 թ. աշուն—*Երկու տարի Հայաստանը ասպատակելուց հետո Լանկ-Թամուրը վերադառնում է Սամարղանդ։*

1390-ական—1446 թթ.—*գործել է Մեծոփա վանքի բարձրագույն դպրոցը։*

1394 թ.—*Հյուսիսային Միջագետքի վրայով Լանկ-Թամուրը երկրորդ անգամ արշավում է Հայաստան։*

1396 թ. գարուն—*Լանկ-Թամուրը Ալանաց դռնով վերադառնում է Անդրկովկաս։*
—Լանկ-Թամուրը իր Միհրանշահ որդուն կուսակալ է նշանակում Իրանի, Իրաքի, Հայաստանի և Անդրկովկասյան նվաճված երկրամասերի վրա։

1399 թ. սեպտեմբեր—*Լանկ-Թամուրն սկսում է իր երրորդ արշավանքը դեպի Հայաստան և մինչև 1403 թ. նվաճում ողջ Անդրկովկասը, Փոքր Ասիան, Միջագետքը և Սիրիան։*

1402 թ. հուլիս—*Լանկ-Թամուրը պարտության է մատնում սուլթան Բայազետին և գերի վերցնում նրան։*

1403 թ.—*Լանկ-Թամուրը նորից արշավում է Վրաստան և Աբխազիա։*

1405 թ. փետրվար—*70-ամյա հասակում մեռնում է Լանկ-Թամուրը։*

1406 թ. աշուն—*Կարա-Յուսուֆը պարտության է մատնում Արուբաքրին և գրավում է Թավրիզը։*

1410—1468 թթ.—*Կարա-կոյունլու թուրքմենների տիրապետությունը Ատրպատականի, Իրաքի և Հայաստանի վրա։*

1411 թ.—*Կարա-Յուսուֆը պարտության է մատնում իր դեմ ապստամբած Շիրվանշահ Իբրահիմի և վրաց Կոստանդին թագավորի միացյալ զորքերին։*

1418 թ.—*Կարա-Յուսուֆը արշավում է Հյուսիսային Միջագետք։*

1419 թ.—*Կարա-կոյունլուների դեմ պատերազմ են սկսում Թամուրյան Շահռուխը և Աղ-Կոյունլու Օսմանը։*

1421 թ. օգոստոսի 21—*Բագրևանդի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Կարա-կոյունլուները պարտություն են կրում։*

1422—1427 թթ.—*Կարա-Յուսուֆի որդի Իսքանդարը համառ պայքար է մղում քրդական կիսանկախ ամիրությունների դեմ Հայաստանի հարավում՝ Բաղեշում, Ոստանիքում, Խիզանում։*

1427 թ.—*Վերջ է տրվում Մակվի հայկական իշխանությանը։*

1428—1429 թթ.—*Թամուրյանները պատերազմում են կարա-կոյունլուների դեմ և ասպատակում են Հայաստանի տարբեր շրջանները։*

1431 թ.—*Հայաստանում և Ադրբեջանում մոլեգնում է սովը։*

1435 թ.—*Շահռուխը երրորդ անգամ պատերազմ է սկսում Իսքանդարի դեմ և ավերածություններ սփռում Հայաստանում։*

1435 թ.—*Սյունյաց իշխան Բեշքեն Օրբելյանը 6000 սյունեցի ընտանիքներով անցնում է Լոռի։*

1435 թ.—*Իսքանդարը սպանվում է իր Շահ-Կուբադ որդու կողմից։*

1437—1467 թթ.—*Ջհանշահի տիրակալությունը։*

1441 թ.—*Կաթողիկոսական աթոռը վերահաստատվում է Էջմիածնում։*

1441 թ.—*Հայկական եպիսկոպոսական թեմ է հիմնադրվում Մոլդովայի մայրաքաղաք Սուչավայում։*

1453 թ. մայիսի 29—*Թուրքերը գրավում են Կոստանդնուպոլիսը։*

1454 թ.—*Աղ-կոյունլու Ուզուն-Հասանը արշավում է Հայաստանի հյուսիսային շրջանների վրա։*

1457—1458 թթ.—*Տեղի է ունենում Ջհանշահի արևելյան երկրորդ խոշոր արշավանքը։*

1461 թ.—*Ջհանշահը արշավում է Շիրաղ։*

1467 թ. մայիս—*Ջհանշահը վճռական ճակատամարտի է ելնում Աղ-կոյունլուների դեմ և զոհվում է 70-ամյա հասակում։*

1468—1502 թթ.—*Հայաստանը ենթարկվում է Աղ-կոյունլու թուրքմենների տիրապետությանը։*

1470—1473 թթ.—Աղ-կոյունլուները ճնշում են Հայաստանի հարավում հաստատված քրդական ցեղերին։
1472 թ.—Ուզուն-Հասանը արշավանք է կազմակերպում ընդդեմ Թուրքիայի։
1472 թ. օգոստոս—Տեղի է ունենում Կոնիայի ճակատամարտը, որտեղ Աղ-կոյունլուները պարտություն են կրում։
1473 թ. ցգոստոսի 12—Տեղի է ունենում Դերջանի ճակատամարտը։
1478 թ.—Սպանվում է Ուզուն-Հասանը։
1478—1490 թթ.—Աղ-կոյունլուների գահին տիրում է Ուզուն-Հասանի որդի Յաղուբը։
—1489-ից քիչ առաջ վերջ է տրվում Համշենի հայկական իշխանությանը. Դավիթ Բ իշխանը վտարվում է իր տիրույթներից։
1488 թ.—Յաղուբը կրոնական հալածանք է ծավալում հայերի դեմ։
1500—1704 թթ.—Գործել է Բաղեշի Ամրոցոլու վանքի բարձրագույն բնույթի դպրոցը։
1502 թ.—Վերջ է դրվում Աղ-կոյունլուների տիրապետությանը և Սեֆյան դինաստիայի տիրապետությունն է հաստատվում։
1512 թ.—Օսմանյան սուլթան Սելիմ Ահեղը մեծ զորաբանակով հարձակման է անցնում Իրանի դեմ. սկիզբ է դրվում թուրք-իրանական պատերազմներին։
1512 թ.—Լույս է տեսնում հայերեն առաջին տպագիր գիրքը։
1514 թ.—Չալդրանի ճակատամարտում պարսիկները պարտություն են կրում, օսմանյան թուրքերը գրավում են Թավրիզը։
1519 թ.—Լեհական սեյմում Սիգիզմունդ I-ի կողմից հաստատվում է լեհահայոց «Դատաստանագիրքը»։
1530 թ.—Շահ Թահմազ I-ը վերագրավում է Բաղդադը։
1545—1546 թթ.—Ալխազ միրզան նվաճում է Շիրվանը, ապա միանում է ապստամբներին և ելնում է ընդդեմ եղբորը՝ Շահ Թահմազ I-ի։
1546—1547 թթ.—Թահմազ I-ը ճնշում է Ալխազ Միրզայի ապստամբությունը և շարժվում է Վրաստան։
1547 թ.—Վրաց Լուարսաբ թագավորի ապստամբությունը Իրանի դեմ։
1551—1555 թթ.—Շահ Թահմազ I-ի զորքերը հակահարձակման են անցնում Թուրքիայի դեմ և ավերածություններ սփռում Բարձր Հայքում, Տուրուբերանում, Վասպուրականում։ Տեղի են ունենում նոր ավերիչ պատերազմներ Հայաստանում։
1549 թ.—Հայ ժողովրդի ազատագրության խնդրով Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսը լինում է Հռոմում։
1555 թ.—Ամասիայում հաշտության պայմանագիր է կնքվում Թուրքիայի և Իրանի միջև։
1562 թ.—Հայաստանի ազատագրության համար գաղտնի ժողով է հրավիրվում Միքայել Սեբաստացի կաթողիկոսի կողմից։
1562 թ.—Աբգար Թոխաթցու գլխավորությամբ պատվիրակություն է մեկնում Վենետիկ։
1567 թ.—Աբգար դպիրը առաջին տպարանն է հիմնում Կոստանդնուպոլսում։
1575 թ.—Թադեոս կաթողիկոսի ուղևորությունը Լվով, Վենետիկ, Հռոմ՝ Հայաստանի ազատագրության խնդրով։

1580 թ.—Թուրքական զորքերը ներխուժում են Ղարաբաղ, ապա գրավում Երևանն ու Գեղարքունիքը։
1585 թ.—Լեհաստանի կանցլեր Յան Զամոյսկին արտոնագիր է տալիս Զամոստիեն քաղաքի հայերին։
1587—1629 թթ.—Շահ Աբբաս I-ի իշխանությունը։
1590 թ.—Շահ Աբբաս I-ը հաշտության պայմանագիր է կնքում Թուրքիայի հետ։
1595—1628 թթ.—Ջալալիների ապստամբությունը։
1603 թ.—Շահ Աբբաս I-ը վերսկսում է պատերազմը, գրավում է Թավրիզը, շարժվում է Հայաստան և հյուրընկալվում Ջուղայում։
1604 թ.—Շահ Աբբաս I-ը Արևելյան Հայաստանի բնակչությանը գաղթեցնում է Իրան (հատկապես մայրաքաղաք Սպահանի շրջակայքը)։
1604—1605 թթ.—Հիմնադրվում է Նոր Ջուղան։
1605—1625 թթ.—Ամիր Գունա խանի իշխանությունը Արարատյան երկրում։
1606—1620 թթ.—Մեխլուի գլխավորությամբ գյուղացիական շարժումը։
1612 թ.—Հաշտության պայմանագիր է կնքվում Թուրքիայի և Իրանի միջև։
1615 թ.—Հիմնադրվում է Սյունյաց Մեծ Անապատի կամ Հարանց Անապատի բարձրագույն դպրոցը։
1616 թ.—Թուրքերը նոր հարձակում են սկսում Երևանի վրա։
1618 թ.—Ատրպատականի ուղղությամբ արշավանք է սկսում Խալիլ փաշան։
1622 թ.—Հիմնադրվում է Լիմ անապատի դպրոցը։
1625 թ.—Գեորգի Սահակաձեի ապստամբությունը Վրաստանում։
1625—1635 թթ.—Արարատյան երկրում իշխում է Թահմազկուլի խանը։
1627—1699 թթ.—Ապրել ու գործել է Զաքարիա Քանաքեցին։
1629—1642 թթ.—Իրանում իշխում է Շահ Աբբաս I-ի թոռ Շահ Սաֆին։
1632 թ.—Շահ Սաֆին արշավում է վրաց Թեյմուրազ թագավորի դեմ։
1632 թ.—Թուրքական զորքերը ասպատակում, ավերում են Շիրակի դաշտը, Ապարանի, Կարբի և Կոտայքի գավառները։
1635 թ.—Սուլթան Մուրադը 400 հազարանոց բանակով պաշարում է Երևանի բերդը և 7 օր անց գրավում։
1636 թ. մարտի 26—Կըզըլբաշները վերագրավում են Երևանի բերդը։
1637 թ.—Սկսում է գործել Էջմիածնի բարձրագույն դպրոցը։
1637—1695 թթ.—Ապրել ու գործել է Երեմիա Չելեբի Քյոմուրճյանը։
1638 թ.—Հայկական տպարան է հիմնադրվում Նոր Ջուղայում։
1650-ականից մինչև XVIII-ի վերջը գործում է Նոր Ջուղայի դպրոցը։
1639 թ.—Կնքվում է հաշտության պայմանագիր, որով Հայաստանը երկրորդ անգամ բաժանվում է Իրանի և Թուրքիայի միջև։
1642—1666 թթ.—Իրանում իշխում է Շահ Աբբաս II-ը։
1648 թ.—Վարվար Ալի փաշայի ապստամբությունը։
1661—1722 թթ.—Ապրել ու գործել է Նաղաշ Հովնաթանը։
1664 թ.—Ավարտվում է Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի կառուցումը։
1666 թ.—Բոգդան Սալթանով հայազգի նկարիչը հաստատվում է Մոսկվայում։
1666—1694 թթ.—Իրանում իշխում է Շահ Սուլեյմանը։
1667 թ.—Առևտրական պայմանագիր է կնքվում Ռուսաստանի և Սպահանի հայ առևտրական ընկերության միջև։
1668 թ.—Հայկական տպարան է հիմնադրվում Լիվոռնոյում։

1669 թ.—Ամստերդամում տպագրվում է Առաքել Դավրիժեցու «Պատմությունը»։

1673 թ.—Հայկական տպարան է հիմնադրվում Մարսելում։

1677 թ.—Հակոբ Ջուղայեցու գլխավորությամբ Էջմիածնում հրավիրվում է դաղտնի ժողով։

1680 թ.—Կ. Պոլսում մահանում է Հակոբ Ջուղայեցին։

—Իսրայել Օրին մեկնում է Եվրոպա։

1683—1768 թթ.—Ապրել ու գործել է Պաղտասար Դպիրը։

1687 թ.—Մահացել է Ստեփանոս Լեհացին։

1695 թ.—Ամստերդամում տպագրվում է «Համատարած աշխարհացոյց» անունով մեծ քարտեզը և առաջին անգամ՝ Մ. Խորենացու «Հայոց պատմությունը»։

1700 թ.—Գեղա հայաքաղաքի հիմնադրումը Սոմեշ գետի ափին։

1701 թ.—Իսրայել Օրին և Մինաս վարդապետ Տիգրանյանցը գալիս են Մոսկվա։

1703 թ.—Օրին դեսպանական պրիկազին է ներկայացնում իր ցուցումներով մշակված Հայաստանի քարտեզը։

1708 թ.—Իսրայել Օրին իբրև դեսպան ուղարկվում է Իրան։

1710—1780 թթ.—Ապրել ու գործել է Սիմեոն Երևանցի կաթողիկոսը։

1711 թ.—Օրին վերադառնում է Ռուսաստան և հանկարծամահ է լինում Աստրախանում։

1712—1795 թթ.—Ապրել ու գործել է Սայաթ-Նովան։

1712 թ.—Լեզգիների առաջնորդ Հաջի Դավութը հարձակվում է Շամախու վրա։

1715—1717 թթ.—Իշխան Վոլինսկու դեսպանությունը Իրանում։

1717 թ.—Մխիթար Սեբաստացին ս. Ղազար կղզում հիմնում է միաբանություն և ապա՝ դպրոց։

1720 թ.—Լեզգիները Սուրխայի գլխավորությամբ ասպատակում և ավերում են Լոռին։

—Ղարաբաղի և Ղափանի ինքնապաշտպանության կազմակերպումը ընդդեմ լեզգիների։

1721 թ.—Լեզգիները նորից հարձակվում են Շամախու վրա։

1722—1730 թթ.—Ազատագրական կռիվներ են ծավալվում Սյունիքում Դավիթ Բեկի և Մխիթար սպարապետի ղեկավարությամբ։

1722 թ.—Մուղանի վրայով լեզգիները մտնում են Դիզակի և Խաչենի տերիտորիաները։

1722 թ. սեպտեմբեր—Հայ-վրացական զինական ուժերը Գանձակի Ջոլակ գյուղի մոտ միավորվում են և սպասում ռուսական զորքերի առաջխաղացմանը։

1722—1723 թթ.—Ռուսական զորքերը արշավում են Իրան և գրավում Կասպից ծովի առափնյա շրջանները։

1723 թ.—Մուհամադկուլի խանը (Կախեթիայի Կոստանդին թագավորը), որը նշանակված էր Վախթանգ VI-ի փոխարեն, գրավում է Թիֆլիսը։

1723 թ. ամառ—Թուրքերը գրավում են Թիֆլիսը։

—Գանձակը հերոսաբար պաշտպանվում է թուրքական հարձակումից։

1724 թ.—Պետրոս I-ը հրովարտակ է հրապարակում հայ ժողովրդին իր հովանավորության տակ առնելու մասին։

1724 թ. մարտի 24—Գանձակում պայմանագիր է կնքվում հայ և ազրբեջանցի բնակչության միջև՝ ընդդեմ թուրքերի։

հունիս—Թուրքական զորավար Արիֆ Ահմեդ փաշան Գյումրիի վրայով շարժվում է դեպի Երևան։

հունիսի 7—Թուրքական զորքերը պաշարում են Երևանը և 3 ամիս անց. մեծ կորուստներ տալով, գրավում քաղաքը։

օգոստոս—Թուրքերը գրավում են Նախիջևանն ու Օրդուբադը։

—Ավան Յուզբաշու և Իվան Կարապետի գլխավորությամբ Ղարաբաղի սղնախներից 2000 ռազմիկներ անցնում են Ղափան։

1725 թ.—Համառ կռիվներ են մղվում Գողթնում թուրքերի դեմ։

1725 թ. գարուն—Թուրքական զորքերը մոտենում են Սիսիանի և Ղափանի բարձունքներին։

—Թուրքական զորքերը Սարու Մուստաֆա փաշայի հրամանատարությամբ գրավում են Լոռու բերդը։

փետրվար—Թուրքական 6000-անոց մի բանակ մտնում է Վարանդա և գրեթե ամբողջովին ոչնչացվում։

1726 թ. աշուն—Սարու Մուստաֆա փաշայի զորաբանակը գրոհում է Շուշի քաղաքի վրա և 8-օրյա մարտերից հետո գրավում։

—Իրանի Համադան քաղաքում ծնվում է Հովսեփ էմինը։

1727 թ.—Մահանում է Ղարաբաղի ազատագրական կռիվների եռանդուն կազմակերպիչ Եսայի կաթողիկոս Հասան-Ջալալյանը։

—Տեղի է ունենում Հալիձորի հերոսական պաշտպանությունը, ուր թուրքական բանակը պարտություն է կրում։

—Թահմազ շահը ճանաչում է Դավիթ-Բեկի իշխանությունը Ղափանի երկրում։

1728 թ.—Մահանում է Դավիթ-Բեկը։

—Սկսվում է թուրքական զորքերի ընդհանուր հարձակումը։

1732 թ.—Նադիր-կուլի խանը գահընկեց է անում շահ Թահմազ II-ին և գրավում գահը։

1735 թ.—Նադիր շահը պաշարում է Գանձակը, Լոռի-Փամբակի վրայով շարժվում դեպի Կարս։

1735 թ. հուլիսի 8—Եղվարդի ճակատամարտում թուրքերը ջախջախիչ պարտություն են կրում։

1737 թ.—Նադիր շահը արշավում է Աֆղանստան։

1740-ական թթ.—Ղզլարում կազմավորվում է հայկական գաղթօջախ։

1742 թ.—Նադիրի հրամանով աշխարհագիր է անցկացվում Հայաստանում։

1744—1746 թթ.—Նադիրը պատերազմում է Թուրքիայի դեմ։

1746 թ.—Աստրախանում հիմնադրվում է հայկական դատարան։

1747 թ.—Սպանվում է Նադիր շահը։

1750-ական թթ.—Փանահ խանը հաստատվում է Շուշիում։

—Աֆղան Ազատ խանը արշավում է Նախիջևան։

1752 թ. հունիս—Ազատ խանը արշավում է Երևանի խանության վրա։

—Ադուլիսցիները համառ դիմադրություն են ցույց տալիս Ազատ խանին։

հունիսի 28—Քանաքեռի մոտ տեղի է ունենում ճակատամարտ Հերակլ II-ի և Ազատ խանի զորքերի միջև։

1759 թ.—Հովսեփ Էմինը գալիս է Հայաստան՝ ազատագրական պայքարը կազմակերպելու նպատակով։
—Լեզգիների 8000 հոգիանոց բանակը արշավում է Անդրկովկաս։
1760 թ.—Լեզգիները ասպատակում են Արարատյան երկիրը։
—Վրաց Թեյմուրազ թագավորը օգնություն ստանալու ակնկալությամբ մեկնում է Ռուսաստան։
1760—1764 թթ.—Հնդկահայերը Գորդին խանի գլխավորությամբ (Գրիգոր Հարությունյան) հերոսական մասնակցություն են ունենում Բենգալիայի ազատագրական կռիվներին՝ ընդդեմ անգլիական գաղութարարների։
1761—1762 թթ.—Էմինը վերադառնում է Լոնդոն, ապա գալիս Պետերբուրգ և Մոսկվա։
1762—1779 թթ.—Հերակլ II-ը չորս անգամ (1762, 1765, 1778 և 1779 թթ.) արշավանք է կազմակերպում Երևանի խանի դեմ և վերջինիս հպատակեցնում իրեն։
1763 թ.—Մոզդոկում կազմավորվում է հայկական գաղթօջախ։
1763 թ. փետրվար—Էմինը Մոսկվայից ուղևորվում է Վրաստան՝ անդրկովկասյան ժողովուրդների ազատագրական պայքարը կազմակերպելու համար և մի տարի անց հեռանում է Վրաստանից։
1766 թ. օգոստոսի 1—Սիմեոն Երևանցի կաթողիկոսը կոնդակ է ուղարկում Եկատերինա II-ին՝ հայ ժողովրդին օգնելու խնդրանքով։
1768 թ. հուլիսի 30—Եկատերինա II-ի հրովարտակը էջմիածնի իրավունքների մասին։
1769 թ. հունիսի 8—Մովսես Սարաֆյանի կազմած Հայաստանի ազատագրման ծրագիրը ներկայացվում է Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային։
1770-ական թթ.—Մադրասի հայրենասիրական խմբակը հրատարակում է «Նոր տետրակ որ կոչի յորդորակ»-ը։
1771 թ.—Սկսում է գործել էջմիածնի տպարանը, որը առաջինն էր Հայաստանում։
1773 թ.—Աստրախանում հիմնադրվում է ռուսահայոց եկեղեցական թեմը։
1780 թ. հունվարի 10—Հովհաննես Լազարյանը Հայաստանի ազատագրության մասին զեկուցագիր է ներկայացնում Ա. Սուվորովին։
—հունվար—Ա. Սուվորովը մեկնում է Աստրախան։
—հունվար —Հիմնադրվում է Նոր Նախիջևանի հայկական գաղթօջախը։
1781 թ. նոյեմբեր—Հաշտության պայմանագիր է կնքվում Հերակլ II-ի և Երևանի խանի միջև։
—Պետերբուրգում հիմնադրվում է Գրիգոր Խալդարյանի տպարանը։
1783 թ.—Հ. Արղությանը մշակում է Հայաստանի ազատագրության ծրագիրը։
—Մադրասում հրատարակվում է «Տետրակ որ կոչի նշաւակ» գիրքը։
—հուլիսի 24—Գևորգիևսկի ամրոցում պայմանագիր է կնքվում Ռուսաստանի և Վրաստանի միջև, որով վերջինս մտնում է Ռուսաստանի հովանավորության ներքո։
1785 թ. սեպտեմբերի 17—Սկսվում է Ավարայի Ումմա խանի արշավանքը դեպի Վրաստան և Հայաստան (Բորչալու, Ախթալա, Լոռի)։
1788—1789 թթ.—Մադրասում հրատարակվում է «Ոսկեայթ փառացը»։
1795 թ.—Տեղի է ունենում Աղա-Մուհամադ շահի առաջին արշավանքը։

—օգոստոսի վերջին—Երևանի խանը բերդը հանձնում է Աղա-Մուհամադ շահին։

—սեպտեմբերի 12—Աղա-Մուհամադը գրավում է Թիֆլիսը։

—դեկտեմբերի 13—Ջավադ խանը Գանձակը հանձնում է ռուսներին։

1797 թ.—Տեղի է ունենում Աղա-Մուհամադի երկրորդ արշավանքը։

—գարուն—Աղա-Մուհամադը գրավում է Շուշին և սպանվում է Շուշու բերդում։

1797 թ. հուլիսի 20—Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը օգնության խնդրանքով նամակ է գրում Պավել I կայսրին։

1798 թ. փետրվարի 26—Պավել I-ի հրովարտակը հայերի մասին։

1801 թ.—Վրաստանը և հյուսիս-արևելյան Հայաստանի որոշ շրջաններ անցնում են Ռուսական կայսրության հովանավորության տակ։